

Օ Շ Ա Կ Ա՛Ն

Օշակա՞ն,

Քանինե՞ր այսօր քեզ ուխտի եկան...
Ու դեռ քանինե՞ր պիտի գան նորեն
Համբուրել այն քարն որ անշըթորեն
Կը ծածկե Տիրի փառքն հափշտակող
Հայ Գիրի Հսկան իբրև լուռ կոթող:

Օշակա՞ն,

Բերդիդ բեկորներն՝ որ վաղուց ինկան՝
Եթե իրար գան՝ չեն կրնար մրցիլ
Այն սուրբ քարին նետ՝ որ իբր երփնածիլ
Անուրջի խորան՝ կայք մ'է Բեթելի,
Մրբված՝ հայ Մտքի օծումովն առլի:

Օշակա՞ն,

Հողերդ՝ ուր ոսկրեր փըտած են այնքան՝
Թե ի կշիռ գան հոծությամբ ժայռի՝
Չեն զորեր շարժել մետ մը նըժարի
Դեմ այն աճյունին՝ ուր հայ հոգվույն պերձ
Կրակն է անթեղված դարերով անվերջ:

Օշակա՞ն,

Թե քու անուշակ հուլվերդ այգեկան
Մեկ հնձանի մեջ ճմլըվին առատ՝
Չեն կրնար բորել կաթիլ մ'անարատ
Դեպի խառնարանը մեծ Մըշակին՝
Ուր խանդ ու խորհուրդ կը պոազչակին:

Օշակա՞ն,

Քեզ ծոնված խունկերն այն կալսեռական՝
Որ երկար ատեն ծըխեցան քու մեջ՝
Չեն կրնար պարել բույրի մ'ելսէջ.
Մինչ ծոցդ թափված յուր անուն մը ჩեզ
Դեռ նարդի հոտով կը խնկե ըպքեզ:

Օշակա՞ն,

Շողի ու սովերի նախանձ մը կպան
Ցերեներդ նախկին՝ գիշերներդ հետին
Լուսավորության մեր Շահապետին
Անմուտ արնեն; և իր չիրմին սառ
Սընարքը պճնող աստղերեն պայծառ:

Օշակա՞ն,

Իրմով սրբավայր մ'ես նըվիրական...
Եթե Մորիկ մ'իսկ ցանկա մականի՝
Հոդ չըկա դափնի մ'իրեն արժանի.
Գըրիչը միայն նիշերովն անմաշ՝
Հոդ իր վեմն ունի ջինջ ու սրբատաշ:

Օշակա՞ն,

Օր մ'ալ ես եկա իբրև ուխտական...
Ու այն Քարին մոտ՝ որուն ներքւ նա
Կը հսկե արթուն քան թե կը քնանա,
Ըսի. Հողին տակ Գիրը՝ երկաթե
Շունչով մը կ'ապրի... իսկ Քա՛րը.— Միթե
Չէ՝ երապին խորքն՝ ուր դեռ կը հածին
Իր միտքն ադամանդ, մատներն ոսկեծին:

Օշակա՞ն,

Ով Սուլքը Մեսրոպի հանգիստ սիրական,
Եթե օր մ'երբեք նոր հովիվ նոր հոտ
Պաշտամունքի՝ նոր ծեսով գան քեզ մոտ՝
Ու իրենց համար նոր Աստված մ'ուզեն,
Արթընցո՛ւր Հըսկան Գիրի երապեն...:

